

ԵՎԱ ԱՂՋՆԱԿԻ ՀՈՐԻՆԱԾ ԼԵԶՈՒՆ

Աշխարհի Ֆրանսիա երկրի Պո քաղաքում ապրում է մի հինգ տարեկան աղջիկ, նրա անունն է Եվա: Մանկապարտեզում ֆրանսիացի երեխաները Էվա են ասում: Նա սկզբից կնճռոտում էր քիթը ու նեղացած կրկնում՝ իմ անունը Եվա է:

– Հա, էլի, մենք էլ Էվա ենք ասում, ի՞նչն է սխալ:

Եվան համոզվեց, որ Եվան Էվա է, և տանն էլ նրան սկսեցին և՛ Եվա ասել, և՛ Էվա: Կարևորը՝ սիրով ասելն է, իսկ որ ֆրանսիացի երեխաները նրան սիրում են, պարզից էլ պարզ է, նրանից սովորել են մի քանի հայերեն բառ՝ մամա, տուր, մերսի...

Զարմացել էին, որ ֆրանսերեն «մերսի» բառը Հայաստանում տարածված է և Էվայից ցանկացան լսել հայերեն բառը, այսինքն՝ թարգմանությունը, և Էվան արտասանեց, իհարկե, մի քիչ դերասանավարի՝ շնորհակալություն:

Երեխեքը լրջացան և դժվարությամբ կրկնեցին, որից Էվայի ծիծաղն եկավ, բայց նա զսպեց իրեն ու հենց այդ պահին մտքով անցավ հորինել մի այնպիսի լեզու, որ բոլորին հասկանալի լինի, բառերը շատ երկար չլինեն, խոսքերն ընկալվեն անմիջապես և նույնքան հեշտ պատասխանեն ընկերոջը:

Էվայի տատիկ Անահիտը և պապիկ Վաչագանը ապրում են Երևանում, ամեն օր տեսակապով խոսում և խաղում են Էվայի և նրա քույրերի հետ, բայց ավելի շատ՝ Էվայի հետ, որովհետև քույրերը դասեր էին սովորում, իսկ Էվան իր չորս պայուսակը գրկած, նրանց մեջ էլ հայերեն և ֆրանսերեն մանկական գրքեր, շրջում էր սենյակում, իսկ խոսելիս՝ տատ ու պապին իր նոր հեքիաթն էր պատմում, բայց ի՞նչ հեքիաթ, օրվա անցադարձն էր նկարագրում և՛ հայերեն, և՛ ֆրանսերեն, որից տատն ու պապը որոշ բաներ էին հասկանում, հիմնականում ժպտում էին ու հետևում նրա լայնեզր գլխարկի տակ կայծկլտացող աչուկներին:

Երեկոյան տեսակապի ընթացքում Էվան տատիկին ասաց, որ նոր լեզու է հորինել, որի մեջ և՛ հայերենը կա, և՛ ֆրանսերենը, և՛ արաբերենը (նրանց մանկապարտեզում արաբ երեխաներ կային), և՛ աշխարհի բոլոր լեզուները: Անահիտ տատն ուրախացավ.

– Դե, Էվա ջան, խոսիր լսենք:

Էվան մի պահ լուրջ նայեց տատիկին և դանդաղ շարժեց շուրթերը, անձայն, ապա ծամածռեց...

Տատը զարմացավ.

– Ի՞նչ ես ասում, է՛:

– Չհասկացա՞ր, տատի, դա իմ լեզունն է, ասում եմ, ե՞րբ ես գալու մեր տուն:

– Երկու ամիս հետո, Էվա ջան,– պատասխանեց տատը,– բայց էնպես խոսի, որ հասկանամ:

– Չէ, տատի, ես միշտ այսպես եմ խոսելու, դու էլ սովորի, դժվար չէ, ահա այսպես,– նա ծոմոնեց շուրթերը, կնճռոտեց քիթը, լայնեզր գլխարկը ներքև սահեցրեց, փակելով հոնքերը:

– Էդ ի՞նչ ասացիր,– հարցրեց տատը:

– Չհասկացա՞ր, այ տատ, ասացի՝ շուտ արի, թե չէ կլացեմ:

Անահիտ տատը տխրեց, որ չի հասկանում Էվայի լեզուն, համ էլ կարող է երեխան լացի: Փորձեց խոսել Էվայի հորինած լեզվով՝ շուրթերն անկազմակերպ բաց ու խուփ արեց, քիթը դժվարությամբ տեղաշարժեց մի քիչ աջ, իսկ ճակատին այնպիսի կնճիռներ ցուցադրեց, որ տատիկին թվաց, թե Էվան կվախենա վիուկ տատիկից ու կփախչի: Սակայն Էվան ծիծաղելով ասաց.

– Տատիկ, ինչ դժվար ես սովորում, հիմա կրկնում եմ:

Եվ զարմանալի թեթև, գլխի մի շարժումով լայնեզր գլխարկն իջեցրեց աչքերին, ապա երեսին և նրա տակ թաքնված լռեց, լռեց, ոչ մի ծպտուն:

Տատն անհանգստացավ.

– Այ Էվա, բա ինչո՞ւ չես կրկնում, մտար գլխարկի տակ:

Լավեց Էվայի ձայնը.

– Տատի, կախարդում եմ, որ ինքնաթիռը շուտ հասնի մեր տուն և ես նստեմ գամ Երևան, քեզ սովորեցնեմ իմ լեզուն, տեսնում եմ ծույլ ես, այ, պապիկը շուտ կսովորի:

– Վաչիկ, Վաչիկ, Էվան քեզ է կանչում, արի նրա լեզուն հասկացի:

Պապիկն շտապ եկավ: Էվան գլխարկի տակից հանեց երեսը և թարթեց աչքերը, ծածանեց մազերը, բռնեց աջ ականջը ու մեղմ ժպտալով ձգեց:

– Ի՞նչ ես անում, ի՞նչ ես ասում, Էվա,– հարցրեց պապը:

Էվան ստիպված խոսեց.

– Պապիկ, դու էլ տատիկի պես լեզու չես հասկանում, գալու եմ Երևան, մանկապարտեզ բացեմ ձեզ համար ու սովորեցնեմ իմ լեզուն:

– Արի, արի, Էվա ջան, – սիրով պատասխանեց Վաչիկ պապը:

Այդ պահին Էվան արդեն ձանձրացած, վերցրեց չորս պայուսակն ու վազեց մյուս սենյակ:

Տեսակապի մոտ մնացին պապն ու տատը:

Անահիտ տատը կշտամբեց.

– Էդ ի՞նչ արիր, որ Էվան փախավ, որ ասում եմ՝ կոպիտ ես խոսում երեխեքի հետ, ջղայնանում ես:

– Քեզանից փախավ, ասաց՝ տատիկի պես լավ չես սովորում լեզուս ու թռավ:

– Չէ, քեզանից ձանձրացավ, որ ժամանակին ասում էի ճապոներեն սովորի, արծաթե զարդերդ վերնիսաժում վաճառես, ասում էիր՝ ախր գլուխս չի մտնում ոչ մի հիերոգլիֆ, ճիշտ ասի, չէ՞, բառը...

Պապը խիստ կտրեց.

– Չէ, դու էլ ֆլամանդերեն չսովորեցիր, Բրյուսելում կորար...

Տեսախոսակապի առջև պապն ու տատը երկար կկռվեին, թե ումից փախավ Էվան, եթե հանկարծ պայուսակները թափահարելով չհայտնվեր նույն ինքը՝ Էվան, և ասաց.

– Պապիկ և տատիկ, այսօրվա դասն ավարտված է, ֆինի, այսինքն՝ վերջ, հասկացա՞ք՝ ֆրանսերեն է, կամ անգլերեն, կամ չինարեն, մի խոսքով, ես էլ լավ չեմ հասկանում՝ որ լեզվով է, ֆինի, գնացե՛ք և պարապե՛ք, կրկնե՛ք իմ լեզվի առաջին դասը, վաղը կհարցնեմ, թե լավ չսովորե՞ք՝ ծնող կկանչեմ:

Տատը մեղավոր խոստացավ.

– Կսովորենք, Էվա ջան, քո լեզուն շատ քաղցր է:

Պապն էլ հանձն առավ կրկնել դասը:

Իսկ Էվան պայուսակից հանեց մի գիրք, ֆրանսերեն վարժ բլբլաց.

– Մայրիկն ասել է՝ մարդ քանի լեզու գիտի, այդքան մարդ է, բա՛:

Պապն ու տատը միաձայն ասացին.

– Հա, Էվա ջան, կսովորենք, բա հո քեզ մենակ չենք թողնի:

Պապն ու տատը գիտեն երկու լեզու, չեմ ասի՝ որոնք, դուք մտածե՛ք ու նաև ինձ ասե՛ք՝ Էվան քանի՞ լեզու գիտի:

Ճիշտ պատասխանողին կնվիրեմ նոր լույս տեսած գունազարդ, գեղեցիկ այբբենարանը, բոլոր Էջերին Էվայի ու նրա կախարդական լայնեզր գլխարկի պատկերն է ու նաև մի ինքնաթիռի թռիչք Երևանից Պո, Պոյից Երևան ու մնացյալ աշխարհ:

Իմացա՞ք, որ լեզվի այբբենարանն է:

ԽՈՋԻ ԿՆԻՔԸ

Ժամանակին կար մի խոզ, խոզ մի ասա, մի գոմեջ ասա, կերել-զխկրտվել էր ու էլի էր ուզում, դունչը կերամանից չհանած, տիրոջն հասկացնում էր՝ էլի տուր:

Տերն էլ՝ մի ծերուկ, հազիվ ոտքի վրա:

Երբ խոզն անկուշտ, իբր դժգոհ մտավ ցեխակույտի մեջ ու դուրս ելավ ծանր-ծանր, ծերուկը նայեց կճղակների հետքին և ասաց.

– Խոզ ջան, խոզուկ ջան, էս ինչ լավ կնքել ես, ցեխը կնքել ես, գյուղապետ ջան:

Խոզն էլ, թե.

– Որ գյուղապետ եմ ու կնիք ունեմ, ոտքս համբուրի:

Տերն ուրախացավ.

– Գյուղապետ ջան, ի՞նչ էլ լավ խոսում ես, ոնց որ իսկական պետ լինես:

– Բա ի՞նչ եմ, իսկական եմ, և կճղակս էլ կնիք է, չե՞ս նկատում՝ նայիր, – ասաց խոզը՝ դիմացի աջ ոտքը բարձրացնելով:

Ծերուկն էլ կռացավ, որ համոզվի:

Ու՛ տուր թե կտաս ծերուկի ճակատին:

Ծերուկն անշունչ ընկավ:

Խոզը հպարտացած դունչը տնկեց ու՛ դեպի անտառ:

Ճամփին արջ բուսնեց:

– Ո՞ւր, այ խոզ:

– Գնում եմ կնքեմ բացատը, հը՞, տեղեկանք չունես, ստորագրեմ, կնքեմ:

Արջն ընկավ մտքի մեջ:

– Ունեմ, – գլուխը կախ ասաց, ցույց տալով արագ պոկած մի լայն դդումի տերև: Թե դդումն ինչո՞ւ էր այդտեղ աճել, արջը չգիտեր: Խոզն այդ մասին չմտածեց, ոտքը բարձրացրեց, որ կնքի և, հո՛ւ պ, արջը բռնեց նրա ցեխոտ ոտքից ու քարշ տվեց անտառի խորքը: Այնքան էլ թեթև էր քաշում, ասես խոզը չորացած հաղարջի շիվ է:

Խոզը ճղճղում էր.

– Թող կնքեմ, թող ստորագրեմ, ես գյուղապետ եմ:

Արջը մոթմոթաց.

– Թե դու ես գյուղապետ, ես էլ անտառապետ եմ:

Թավուտում ընկած էր կճղակը դդումի տերևի տակ:

Դե ասեք, ի՞նչ էր մտածում դդումը, չգիտես ինչու՝ գյուղից հեռու, անտառի մոտ աճած:

Այո, դուք ճիշտ եք, նա մտածում էր՝ «ի՞նչ լավ է, ինձնից հիմար դդում կա»:

ՋՈՒՐԸ

Մեծերը նստել էին սեղանի շուրջ և զբաղվում էին չորսամյա տղայի դաստիարակությամբ և կրթությամբ:

Նրան բացատրում էին, որ հանգիստ նստի, պատառաքաղի հետ չխաղա, չբարձրանա սեղանի վրա, ավելորդ տեղը մեջ չընկնի: Ու նաև հարցեր էին տալիս՝ ճշտելու նրա իմացությունը:

Պապը, որ շատ էր սիրում թոռնիկին, հարցրեց.

– Արամ ջան, ի՞նչ գույնի է ջուրը:

Տղան հիշեց բյուրեղապակյա բաժակի ջուրն ու պատասխանեց.

– Սպիտակ:

– Չէ, – ասաց պապը, – սպիտակ չի, ապա լավ մտածի:

Տղայի հոր մտքինը կապույտ գույնն էր, մոր մտքինը՝ կանաչ, տատը մտածում էր՝ գուլալ: Բայց նրանցից ոչ մեկը չասաց իր մտքինը, որովհետև պապը սպասում էր թոռնիկի պատասխանին:

Եվ թոռնիկն ասաց.

– Ջուրը ջրի գույն ունի:

Եվ այդ պատասխանին համաձայն էին աշխարհի բոլոր ծովերը, գետերը, լճերը, հատկապես սեղանի վրա լռած բյուրեղապակյա բաժակի ջուրը:

ՄԵՎՈՒԿԸ

Մի փոքրիկ տղա կա, տարիքը հիմա չեմ ասի, վերջում կիմանաք, անունը կասեմ՝ Սևակ է, Սևուկ են ասում: Աչքերը սև են, իսկ մազերը՝ շեկ: Չի խոսում, այնպես է նայում, ասես աչքերով է լսում: Միրում է լուցկի վառել, ծխախոտ կպցնել, ձեռքը տանում է կրակին և այրելիս չի ճչում, մի քանի արցունք են գալիս աչքերից, այդքանը, հետո էլի է ձեռքը մեկնում լուցկուն, ծխախոտին, կրակին:

Ընկնում է ու չի լալիս, որ այդպես է, նրան ոչ ոք չի ասում, ի՞նչ գտար, ավիդ բաց:

Կատվից ճարպիկ է և թախտից այնպես է թռչում ցած, որ թվում է ոտքը կկոտրի, բայց ժպտում է ու փորձում բարձրանալ սեղանի վրա:

Նրա հայրիկը մի օր շուն բերեց, օվչարկա տեսակի: Համ գայլի է նման, համ շան, է՛, ո՞ր երեխան չի վախենա և՛ գայլից, և՛ շնից, նամանավանդ այդ երկուսի խառնուրդից:

Սևուկը միանգամից սիրեց շանը և վազեց դեպի նա:

Հայրը դեմը կտրեց: Շանը փակեցին մի փոքրիկ սենյակում: Սևուկը դռան մոտից հեռու չէր գնում: Շունը հաչում էր և Սևուկի դեմքն ավելի էր զվարթանում, ինքն էլ էր փորձում հաչել, բայց չէր հաջողվում: Շանը կերակրելու ժամանակ դռան ձեղքից խցկվում էր ներս, հազիվ էին դուրս հանում:

Բոլորը վախենում էին օվջարկայի տեսք ու ձենից, բացի, պարզ է, Սևուկից:

Հետո շան համար առանձին բույն սարքեցին: Իսկ ամիսներ անց շունը ցնկնեց, և երեք ձագ աշխարհ եկան: Դարպասը բացողի վրա մայր շունն այնպես էր հաչում, ասես եկել են իր ձագերին տանելու: Հաչում էր բոլորի վրա և՛ կատաղի: Մի օր Սևուկը, չգիտես ոնց, աննկատ փախել էր տնից և նստել շան բնի մոտ և ապա ձագերի հետ խաղացել ու շոյել էր, մայր շան հետ հայացք էր փոխանակել ու շոյել նաև նրա վիզը, դունչը:

Սևուկի մոր սիրտը թուլացել էր, և տատի սիրտն էր թուլացել, արծվի պես հասել, գրկել էին Սևուկին ու տուն բերել:

Երեկոյան հայրը զարմանքից անվերջ կրկնում էր.

– Ո՞նց շունը չի կծել, ախր մի հարվածով պատառ-պատառ կաներ Սևուկին:

Այդ օրվանից Սևուկը սկսեց խոսել, և առաջին բառը «Հա»-ն էր:

Ասում էին՝ Սևուկ, դու քա՞ջ ես:

Պատասխանում էր՝ հա՛:

Ասում էին՝ Սևուկ, դու հերոս ես:

Պատասխանում էր՝ հա՛:

Իսկ հիմա հասավ այն պահը, որ դուք իմանաք, թե նա քանի տարեկան է: Դա էլ օվջարկա շունը կասի երկու անգամ հաչելով, հիշեք՝ երկու անգամ:

ՈԶՆԻՆ ԵՎ ԵՂԵՎՆԻՆ

Կար-չկար Սուրեն անունով մի ոզնի, նա արդեն չափահաս էր և կարող էր մեն-մենակ շրջել անտառի խորքերում: Սուրեն ոզնու հայրն ու մայրը զգուշացրել էին հեռու մնալ գայլից, աղվեսից, լուսանից և այլ հաղթանդամ գիշատիչ կենդանիներից: Մայրը բազմիցս ասել էր.

– Եթե փորձեն քեզ խաբել ու առաջարկել խաղալ, չհավատաս, փշերդ կցցես ու գունդուկծիկ կսպասես մինչև հեռանա վտանգը: Իսկ եթե ցանկանան գնդակի պես գլորել քեզ, դու չմտածես, թե գնդակ ես, կծակծկես սուր-սուր փշերով և կպաշտպանես քեզ, այդպես ենք ապրել ես ու հայրդ և քույր ու եղբայրներդ և բոլոր ոզնիները:

Սուրեն ոգնին հասել էր խիտ թավուտի մոտ, երբ լսեց աղվեսի ձայն: Սուրենը չշփոթվեց, որովհետև մայրը բացատրել էր.

– Աղվեսի ձայնը սկզբից կամաց է լինում, անգամ՝ քնքուշ, իսկ հետո, երբ ճանկում է խաբված ոգնուն, կոշտանում է ձայնը և հնչում է չարախինդ:

Աղվեսն ասաց.

– Փոքրիկ ոգնի, արի պահմտոցի խաղանք:

Սուրենը կծկվեց և փշերի արանքից հազիվ լսելի եղավ նրա պատասխանը.

– Ես ոգնի չեմ, ես դերձակի ասեղների բարձիկ եմ, չե՞ս հավատում, փորձիր ճանկել ինձ:

Աղվեսը թուրք կուլ տվեց, բայց էլի քնքուշ ձայնով ասաց.

– Ի՛նչ լավ դերձակի, ի՛նչ լավ ասեղի բարձ ես, արի իրար հետ կարկատենք իմ մաշկը, դա չար գայլն է պոռթել:

Սուրենը պատասխանեց.

– Գնա քեզ համար դերձակի արհեստանոց գտիր, ես ուրիշ դերձակի ուրիշ բարձիկ եմ, իմ ասեղները ոչ թե կարկատում, այլ ավելի են խորացնում վերքը:

– Պահ-պահ, ի՛նչ էլ մեծամիտն ես՝ ուրիշ դերձակ, ուրիշ ասեղ, ոգնի ես, էլի, ոչինչ, մի օր ճանկս կրնկնես, – ասաց աղվեսն ու փնթփնթալով հեռացավ:

Սուրեն ոգնին շարունակեց ճանապարհը, բայց մտածեց, որ առաջին անգամ չպիտի շատ հեռանա իրենց բնից:

Շատ գնաց թե քիչ, Սուրենը չհասկացավ, քանզի ո՛չ շատն էր ճանաչում, ո՛չ քիչը, չե՞ որ առաջին անգամ էր մենակ հեռացել մոր կողքից:

Եվ ահա դեմը կանգնեց գայլը: Սուրենը դեռ գայլ չէր տեսել, սակայն հայրը պատմել էր, որ գայլը դաժան աչքեր ունի, սուր և խոշոր կտրիչ ժանիքներ և շատ կտրուկ ցատկ:

– Ո՞ւր ես գնում, – չոր հացրեց գայլը:

Սուրեն ոգնին արդեն գունդուկծիկ էր դարձել և վստահ պահասխանեց.

– Գնում եմ կարկատելու արջի քրքրված դունչը, ինքն է հրավիրել, ասում են մի չար գայլ է խաճել ու հիմա արջը փնտրում է նրան:

– Ի՞նչ գայլ, – վախեցած հարցրեց գայլը, – և ո՞ւր է արջը:

– Գայլը քեզ նման է եղել, քո աչքերի ու ականջների նման աչքեր ու ականջներ է ունեցել, իսկ արջը մոտերքում է, և մենք, ահա ուր որ է, պիտի հանդիպենք, այն ծառի մոտ ենք պայմանավորվել տեսակցել, – անխռով պատասխանեց Սուրենը:

Գայլն այդ խոսքերը լսելով, համենայնդեպս փորձ արեց ճանկել ոգնուն ու փախչել, սակայն ճանկի մեջ խրվեց ոգնու սուր փուշը, և գայլը ցավից ռոնալով՝ փախավ.

– Էլի կհանդիպենք, հա՛, կաշիդ կքերթեմ, – ոգնուն հասավ նրա ցատումնալից ձայնը:

Սուրեն ոգնին հասկացավ, որ բավական խորացել է անտառի մեջ, և վտանգներն ամեն քայլափոխի կծառանան իր դեմ, ու որոշեց հասնել մինչև այն ծառի մոտ, որի կողքին իբր պիտի հանդիպեր արջին: Արագաքայլ հասավ ծառի պղնձափայլ բնին, ու փորիկը ծակեց մի, ոչ, ոչ, շա՛տ, անթիվ (ինքը հաշվել չգիտեր) փշեր ծակեցին Սուրենի վտանգի առջև անպատրաստ փորը:

– Սրանք ի՞նչ փշեր են,– ինքն իրեն հարցրեց ոգնին,– երևի այստեղ ոգնիների ընտանիք է ապրում:

Սուրենն ուշադիր նայեց փշերին, հոտոտեց և հասկացավ, որ դրանք կապ չունեն ոգնիների հետ: Ապա զարմանքով հարցրեց իրեն.

– Սուրեն ոգնի, ո՞վ է այսքան կանաչ ասեղներ ցանել բացատում, ինչքան բան չգիտեմ, ոչինչ, կմեծանամ ու կիմանամ:

Հանկարծ վերևից մի բարի ձայն լսեց.

– Իմն են, փոքրիկ ոգնի, ես փշատերև եղնին են, ծառերի մեջ դժվար չէ ինձ գատելը, ես կարծես կանգնած, անշարժ ոգնի եմ, մի վախեցիր, իմ փշերը քեզ վնաս չեն տա:

Սուրենը մեծավարի ասաց.

– Ես էլ քայլող եղնի եմ:

Պատասխանը շատ դուր եկավ եղնուն, և նա առաջարկեց բարեկամանալ.

– Մենք լավ ընկերներ կլինենք, ես բարձրից կտեսնեմ գիշատիչներին ու քեզ նախապես կզգուշացնեմ:

Սուրենն էլ ընկերանալու հնարավորությունից ուրախացած, պատասխանեց.

– Ես էլ քեզ մի քանի ոգնիական դերձակի ասեղից ավելի սուր փշեր կնվիրեմ:

– Շնորհակալ եմ,– պատասխանեց եղնին և ասաց.– միշտ էլ արի, ես քեզ կսպասեմ, իսկ հիմա տեսնում եմ՝ արջ է գալիս, փախիր:

Սուրենն, իհարկե, վախեցավ, բայց հեռանալուց առաջ ասաց.

– Թող ինքն էլ զգուշանա իմ ասեղներից և քո փշերից:

– Ճիշտ ես ասում,– ոգնուն գոտեպնդելու համար շնկշնկաց եղնին,– Մայրիկիդ հետ վաղը կգաս:

– Այո,– վաղը կգանք,– արդեն հեռացած, ասաց Սուրեն ոգնին:

Մայր ոգնին անհանգստացած փնտրում էր Սուրենին, երբ տեսավ նրա դնչիկը, ցնծությունից ճչաց.

– Ո՞ւր էիր կորել, ա՛յ ինքնագլուխ:

– Գնացել էի կանգնած ոգնու մոտ,– հպարտ ասաց Սուրենը,– մենք ընկերացանք:

– Ի՞նչ կանգնած ոգնի,– զարմացած հարցրեց մայր ոգնին:

– Եղնի է նրա անունը,– պատասխանեց Սուրենը:

- Եղևնի՞,– հարցրեց մայրը,– ծա՞ն եղևնին:
 - Այո,– ասաց Սուրենը:
 - Ի՞նչ սրամիտն ես, Սուրեն, ես էլ կարծում էի միայն սրափուշ ես և ինքնագլուխ, պարզվեց սրափուշ սրամիտն ես, հա՛:
 - Այո, մայրիկ, եղևնին էլ ինձ ասաց՝ քայլող եղևնի, ես հիմա նաև քայլող եղևնի եմ, փշատերև ծառ:
 - Էլ ի՞նչ տեսար,– հարցրեց մայրը:
 - Աղվես, գայլ, արջն էլ պիտի գար, եղևնին զգուշացրեց ու ես հեռացա բացատից, խոստացել եմ՝ վաղը իրար հետ ենք գնալու, նա ուզում է ծանոթանալ քեզ հետ:
 - Ճի՞շտ ես ասում,– սրտխփոցով հարցրեց մայրը,– աղվես, գայլ, արջ:
 - Այո, աղվեսն ու գայլը փախան, իսկ արջը դեռ չէր հասել ինձ, ճամփեն փոխեց,– սառնասիրտ պատասխանեց Սուրենը:
 - Կեցցե մեր խիզախ Սուրենը,– ոգևորված ասաց մայր ոգնին,– բայց վաղը իրար հետ պիտի գնանք, ես ուզում եմ ծանոթանալ եղևնու հետ:
 - Այո, մայրիկ,– պատասխանեց Սուրենը:
- Նա քնելուց առաջ կինոժապավենի պես իր մտքում ետ պտտեցրեց օրվա եղած-չեղածը և մտքում եզրակացրեց. «Ի՞նչ լավ է, որ փշոտ է եղևնին, ինչ լավ է, որ փշեր ունեն ոգնիները ու նաև սրամիտ են ոգնիները և կարող են իրենց պաշտպանել գիշատիչ և ոչ սրամիտ գազաններից»:
- Առաջին անգամ Սուրենն ոգնին քնեց ինքն իրեն պաշտպանած խիզախ, մեծացած ոգնու պես:

ԳԱՆՁԱՏՈՒՓԸ

Աշխարհում կար մի գանձատուփ, ժամանակին նրա մեջ այնքան շատ ոսկե և արծաթե մատանիներ, ապարանջաններ, վզնոցներ ու ականջօղեր կային, որ գանձատուփը շնչահեղձ էր լինում: Գանձերի տերը մի ազահ հարուստ էր, նա գանձատուփը թաղել էր մի մեծ ընկուզենու արմատների մոտ, և իրեն թվում էր, թե միայն ինքը գիտի նրա տեղը:

Այդ աշխարհում ապրում էր մի գանձախույզ, նա այնքան զարմանալի ճշգրիտ փնտրող էր, որ նրա նմանների մասին ասում են՝ չփնտրած գտնում է: Մի օր նա հայտնվում է այն մեծ ընկուզենու մոտ և, քանի որ օրը շոգ է լինում, պառկում է ծառի

ստվերում և աջ ձեռքի մատներով խաղում է հողի հետ, քիչ-քիչ ձեռքը խրվում է փուխը հողի մեջ, և ձեռքը տիրոջը հաղորդում է մի ցանկալի տեղեկություն.

– Այստեղից գանձի հոտ է գալիս:

Գանձախույզը ձեռքն ընկած չորացած ճյուղով փորփրում է այնքան, որ փայտի ծայրը դիպչում է քարի: Բայց գանձախույզի ձեռքն ասում է.

– Դա քար չէ, դա ուրիշ բան է:

Գանձախույզն արագ-արագ ձեռքերով քանդում է հողը և ի՞նչ՝ գանձատուփ: Շնչասպառ բացում է տուփը, և շլացած աչքերի փայլը մի բան է ասում, որ...

Ես չեմ կրկնի, թե ինչ կար գանձատուփի մեջ, որովհետև արդեն դուք գիտեք, ավելի լավ է միանգամից ասեմ, որ գանձախույզը թանկարժեք գտածոն լցնում է ծոցը, գրպանները ու աննկատ հեռանում ընկուզենու տակից, որովհետև նա գիտեր, երկար չեն պառկի ընկուզենու ստվերի մեջ, այդ ծառը մի տարօրինակ հատկություն ունի, նա իր սաղարթի հոտով քնեցնում է մարդկանց:

Գանձախույզն անհետանում է մեծ աշխարհի մի երկրում, այսինքն՝ չի անհետանում, նա ուղղակի չի ցուցադրում իր ունեցվածքը և ապրում է աննկատ ու էլի փնտրում է թանկարժեք գանձեր:

Եվ մի օր էլ գանձատուփի տեր հարուստը գնում է հանելու իր թաքցրածը: Այն, ինչ տեսնում է, սարսափելի հարված է հասցնում նրա սրտին և քիչ է մնում թաղվի ընկուզենու արմատների մոտ բացված փոսում: Նա մի քանի անգամ տնտրում է դատարկ գանձատուփը, նայում է շուրջերթը և զայրացած, որ այդքան դժբախտ է, ոտքով հարվածում է գանձատուփին ու հեռանում:

Գանձատուփը դատարկ-դատարկ, սոված-սոված գնում է մոտակա գյուղ և մարդկանցից խնդրում ոսկի-մոսկի, արծաթ-մարծաթ, նա այնքան խղճալի է բացուխուփ անում կափարիչը, որ ցույց տա իր անտանելի քաղցած լինելը և շարժի մարդկանց խիղճը: Ես չեմ կարող չասել ճշմարտությունը՝ նա արթնացնում է մարդկանց խիղճը, բայց արթնացած խիղճն ի՞նչ անի, երբ աղքատ մարդիկ ո՛չ ոսկի ունեն, ո՛չ արծաթ և անգամ պղնձե աման չունեն:

Գանձատուփը բախում է գյուղի ամենափոքրիկ տան դուռը: Բացում է մի մանչուկ և գանձատուփի փայլուն տեսքով ուրախացած, ճչում է.

– Տատի, մեր տուն է եկել գանձատուփը:

Այդ տանն ապրում էին միայն տղան ու տատիկը: Տատը մոտ գալով, տեսնում է դատարկ գանձատուփը և ժպտում.

– Թոռնիկ ջան, մեր տուն իր ոտքերով ոչ մի գանձ ու գանձատուփ չի գա: Ոչ էլ մենք կգնանք նրանց մոտ:

Մանչուկը խոնարհում է գլուխը, իսկ գանձատուփը որոշում է հեռանալ:

Տատիկն ասում է.

– Տուն մտիր, գանձատուփ ջան, մի բան կեր, հանգստացիր ու հետո գնա:

Գանձատուփը ներս է մտնում և տղայի հետ նստում սեղանի մոտ: Տատիկը հաց ու պանիր և մի աման կաթ է բերում.

– Կեր, գանձատուփ ջան, սոված կլինես:

Գանձատուփը մի փոքր լռելուց հետո ասում է.

– Տատիկ ջան, ես հաց ու պանիր չեմ ուտում, իմ կերածը ոսկի ու արծաթ է, թանկարժեք քարեր:

Տատիկը խնդում է.

– Ա՛յ գանձատուփ, դա մենք էլ կուտեինք, բայց այս տարի երաշտ է եղել, համ էլ կարկուտն էլ ծեծած տեղն է ծեծել ու ո՛չ մատնիք է աճել, ո՛չ էլ վզնոց:

Մանչուկը վեր թռավ ու ճչաց.

– Տատիկ, պահարանի դարակում մի մատանի կա:

Տատը շփոթվում է ու մրմնջում.

– Թոռնիկ ջան, դա պահել եմ, որ քեզ ամուսնացնելիս հարսիկի մատը դնեմ:

– Ոչինչ, տատիկ, գանձատուփը սոված է, հո չի՞ մեռնի:

Մանչուկն այնքան է խնդրում, աչքերն արցունքակալում են:

Գանձատուփը ելնում է, որ գնա: Մանչուկը թոչում է պահարանի մոտ, բացում է դարակը ու բերում մատանին: Տատիկն ուժ չուներ մերժելու թոռնիկին, նա մտածում էր. «Տղայի սիրտը չկոտրեմ, անհեր-անմեր որբ է»:

Գանձատուփը չի ցանկանում կուլ տալ տան միակ մատանին և կափարիչը փակելով, թեքվում է դռան կողմը: Տղան բացում է կափարիչը և մինչև գանձատուփը դռնից ելնի, մատանին դնում է տուփի մեջ:

Գանձատուփը հեռանում է, և տատիկն ու մանչուկը ուտում են հացն ու պանիրը, խմում են կաթը, ապա տատն ասում է.

– Գնամ այժին տուն բերեմ:

Անցնում են տարիներ: Տղան մեծանում է և սիրահարվում: Հարևան Բաղդասարի աղջիկ Հրանուշն էլ նրան է սիրում, սակայն տղայի տատիկը հարսանիքի մասին խոսք չի բացում, նա լսել էր, որ Բաղդասարը գյուղի հրապարակում մի խումբ մարդկանց մոտ ասել է.

– Էնքան աղքատ են, որ մի մատնիքն ի՞նչ է, դա էլ չունեն, ես նրան աղջիկ տվող չեմ:

Մի օր թոռնիկը՝ Դավիթը (կներեք, որ մինչև հիմա տղայի անունը չեմ տվել), տատիկին ասում է.

– Կգնամ հեռու երկիր, կաշխատեմ ու մատնիք կառնեմ, կվերադառնամ:

Ծերացած տատը խեղճացած ասում է.

– Երբ գաս, մեռած կլինեմ:

Այդ պահին մեկը թակում է դուռը: Բացում է Դավիթը և ինչ՝ գանձատուփն է: Տուն է կանչում տղան, ուրախացած հարց ու փորձ է անում: Տատիկն էլ սեղան է զցում, հաց ու պանիր ու մի աման այծի կաթ:

Գանձատուփը լուռ լսում է տղային, տատիկին: Ու երբ տատը հարցրեց.

– Դու էլի հաց ու պանիր չե՞ս ուտում, գանձատուփ ջան:

Գանձատուփը պատասխանեց.

– Ես շատ կուշտ եմ, ձեր տված մատանին պարզվեց կախարդական է, նա այնքան հաջողություն բերեց, որ եկա ձեզ հետ կիսեմ իմ ուրախությունը:

Նա բացեց կափարիչը, և փոքրիկ տունը լուսավորվեց գանձերի շողշողումից: Գանձատուփը սեղանին լցրեց իր ունեցածի ուղիղ կեսը:

– Վա՛յ, մեր մատնիքը, – ճչաց Դավիթը:

– Մա ձերն է և ձերը կլինի, այսինքն՝ քո սիրած աղջկանը:

Տատը չէր հավատում աչքի տեսածին: Նա կորցրել էր խոսելու հասկությունը, միայն զարմանքից աչքերն էր ճպճպացնում:

Գանձատուփն ասաց.

– Բարի մարդիկ, ես պիտի գնամ, գիշերը աստղերի հետ իմ գանձերը փայլ-փայլ են խաղալու, դա շատ հետաքրքիր խաղ է, կարող են ձեր գանձերն էլ միանան, երբ գիշերը դուրս բերեք բակ, նրանք գիտեն այդ խաղը: Հաջողություն:

Մինչև Դավիթի և Հրանուշի հարսանիքի օրը փոքրիկ տան կողքին մի լավ տուն կանգնեց: Տատիկն ու Դավիթը այնտեղ էին տեղափոխվել:

Հարսանիք արեցին տան մեծ սրահում, յոթ օր և յոթ գիշեր քեֆ ու ուրախություն էր:

Գյուղի հրապարակում գյուղացիներից ոմանք իբր գովում էին Դավիթին.

– Լավ տղա է մեր Դավիթը, հարստացավ ու էլի Հրանուշին առավ, ուրիշը, գուցե, կգնար, հարուստի աղջիկ կառներ:

Էդ խոսքերն ընկել էին Հրանուշի հայր Բաղդասարի ականջը, և նա մի օր գյուղի հրապարակում ասաց.

– Այո, լավ տղա է Դավիթը, նա հիմա էլ մի մատնիք չունի, բոլոր մատանիները դրել է աղջկաս մատներին:

Գյուղի իմաստուն Գրիգորն ասաց.

– Այո, բարի մարդու սիրտը մի մեծ գանձատուփ է:

ԱՄԵՆԱՄԵԾ, ԱՄԵՆԱԼԱՎ ԵՎԵՐԸ

Տաթևիկը սիրում էր, երբ իրեն նվերներ էին բերում, իբր գյուտ արեցի, էդ ո՞ր երեխան նվեր չի սիրում, նա բակ էր ելնում և պատմում, որ իրեն նվիրել են աշխարհի ամենալավ կոշիկը, ամենալավ գլխարկը, ամենալավ սահնակը, և սկսվում էր վեճը, մյուս երեխաներն էլ էին հպարտանում, թե իրենց կոշիկն է ամենալավը, գլխարկն է ամենալավը և սահնակն է ամենալավը:

Տարթևիկի պապը չէիր սիրում, երբ երեխաները վիճում են. մի օր Տաթևիկին ասաց.

– Ես քեզ այնպիսի բան կնվիրեմ, որ ոչ մի երեխա և հատկապես դու, էլ չեք վիճի:

Դա, իհարկե, զարմացրեց աղջկան, բայց նա ավելի զարմացավ, երբ մյուս օրը պապը երեք հսկա ամպ գրկած դարպասից ներս մտավ ու ամպերը կախեց Տաթևիկենց բարձր ծառերի սաղարթներից:

Սկզբում աղջնակը ոչինչ չհասկացավ, հետո, երբ պապը հրամայեց.

– Առաջին ամպ, անձրև բեր, նվիրիր Տաթևիկին:

Եվ անձրևը կաթ-կաթ իջավ պապի, Տաթևիկի և բոլոր բույսերի վրա, անգամ պլշած Սևուկ կատվի, աղջնակը ժպտաց ու ճչաց.

– Ի՛մն է անձրևը:

Ճիշդ լսելով, բակ մտան հարևանի երեխաները: Նրանք տեսան անձրևից թրջվողներին ու, քանի որ ամառ էր, իրենք էլ վազելով կանգնեցին ամպի տակ:

Տաթևիկը հպարտացավ.

– Իմ նվերն է անձրևը, ամենալավ անձրևը:

Պապը հրամայեց.

– Երկրորդ ամպ, մանր-մանր կարկուտ տեղա, այնպես, որ ուրախանան փոքրիկներն ու բույսերը:

Եվ ով զարմանք, երկրորդ ամպից մանր-մանր կարկուտ իջավ, այնքան մանր կարկուտ, որ հողին չհասած՝ հալչում էին:

Տաթևիկն էլի հպարտացավ.

– Ի՛մն է կարկուտը, իմ նվերն է, ամենալավ նվերը:

Փոքրիկները փորձում էին օդից բռնել կարկուտի հատիկները, թովոում էին ու մի քանիսն էլ բռնում էին առաջին ամպի՝ անձրևի կաթիլները:

Մեկ էլ պապը մի այլ հրաման արձակեց.

– Երրորդ ամպ, ձյուն բեր, խոշոր-խոշոր փաթիլներով ձյուն:

Պատկերացնո՞ւմ եք, մի ամպ անձրևում էր, երկրորդը՝ կարկուտ ցանում, իսկ երրորդը խոշոր փաթիլներով ձյուն տարածում:

– Իմն են անձրևը, կարկուտը, ձյունը,– բացականչում էր Տաթևիկը:

Ոչ մի երեխա չէր վիճում, նրանք վեճի ժամանակ չունեին, խաղում էին ամռան շոգ կեսօրվա մեջ ու չգիտեին, կանգնե՞ն անձրևի տակ, թե՞ կարկուտ որսան, թե՞ ձնագնդի սարքեն:

Պապը նորից հրաման արձակեց.

– Իսկ հիմա ծիածան նվիրեք, ամպեր:

Եվ երեք ամպերը միաձայն կտրեցին իրենց անձրևը, կարկուտը և ձյունը ու մի հրաշք ծիածան կապեցին Տաթևիկենց այգու վրա:

Թռչունները կշկչում էին, բույսերը զվարթացած ձգվում էին վեր, իսկ երեխաները հիացած նայում էին ծիածանին ու վազվզում էին նրա կամարի տակ:

– Իմ ծիածանն է, իմ նվերն է, ամենալավ նվերը,– կանչեց Տաթևիկը:

Բայց նրան ոչ ոք չէր լսում, որ վիճի, ո՞վ տեսնի այսպիսի ծիածան ու դատարկ-դատարկ խոսի և ավելի դատարկ՝ վիճի:

Ճչում էին երեխաները, թռչունները կշկչում, առուն՝ կարկաչում, և այդ ամենը մի անմոռաց հանդես էր:

Հանկարծ պապը ևս մի խիստ հրաման արձակեց.

– Ամպեր, չվեք ձեր երկիրը:

Ամպերը գիտեին, որ իրենց երկիրը երկինքն է, ու այնպես արագ վեր թռան երկինք ու այնտեղից բոլորի վրա տեղացին անձրև, մանր կարկուտ ու խոշորափաթիլ ձյուն:

Երեխաները վազեցին փողոց, նրանց միացան թաղամասի, քաղաքի ու աշխարհի մանուկները, մեծերը, թռչունները, բույսերը, և ոչ մեկը չէր վիճում, ոչ էլ Տաթևիկն էր կանչում, թե դա իր նվերն է, նա մյուսների հետ թռչկոտում էր ու խաղում անձրևի կաթիլներով, կարկուտի հատիկներով ու ձյան փաթիլներով: Նա հասկացել էր, որ ամենալավ նվերն այն է, որ ուրախացնում է բոլորին և ոչ թե միայն իրեն:

Իսկ պապը այդ ժամանակ գրկել էր Սևուկ կատվին ու բարի ժպիտով մրմնջում էր.

Ես քեզ ծածկել եմ իմ գլխարկով, մի վախեցիր անձրևից ու կարկուտից, դու հո շնի՞կ չես:

Սևուկ կատուն հպարտ մլավեց.

– Շնիկները շատ հաց ու պանիր պիտի ուտեն կատու դառնալու համար:

Պապը համաձայն էր, ի՞նչ աներ, նա շատ էր սիրում իր Սևուկ կատվին:

ԼԱՅԻՎՆ ՈՒ ՈՒՐԱԽԱՆՈՒԿԸ

Երևան քաղաքում հայտնի էր Լացիկ մականունով մի տղա, որի իսկական անունը Արմեն էր, բայց նրան բոլորը ճանաչում էին նախ լացի յուրահատուկ եղանակով, նա լացելուց առաջ փոքր-ինչ ուրախանում էր, որ նա մի լացելու պատճառ գտնվեց ու սկսում էր ցածր, նրբագեղ, խնդրելու պես ծվծվալ, ապա բարձրացնում էր ձայնը ու իսկական, աղեկտուր լացի ականջ սողոցող միալար ռիթմով ուղղակի սպանում էր լսողին, հայր լինի թե մայր, թե տատիկ, թե պապիկ և թե անգամ քույրիկ, նա անխղճորեն ստիպում էր կատարել իր ցանկությունները, այդ լացի ձևով կառավարում էր մարդկանց: Նրա տեսքն այնքան գեղեցիկ էր, ցորենագույն մազերը գանգուր, սև աչքերը փայլփլուն, նայելիս թվում էր հրեշտակ է ականջդ սողոցում: Եվ ընդհանրապես նա հասնում էր իր ուզածին: Քույրիկը՝ Տաթևը, մերթ ընդ մերթ բողոքում էր ու փորձում հորն ու մորը հասկացնել, որ Արմենը ձևեր է թափում, որ դա դերասանությունն է, որ նա ուրախանում է լացելուց առաջ, որ այդպես ոչ մի երեխա ու մարդ չի անում, որ նա ուղղակի անամոթ տղա է: Մակայն ոչ ոք չէր լսում Տաթևիկին, ախր տղայի լացն այնքան բնական էր թվում ու կատաղեցնելու աստիճան զգվեցնող, որ աշխատում էին պահ առաջ կատարել նրա ցանկությունը՝ գնել խաղալիք, վերնաշապիկ, ծամոն, ինքնաթիռ, ուղղաթիռ, հրթիռ և հազար ու մի բան: Տունը լի էր զիզի-բիզի խաղալիքներով, քանդված ինքնաթիռներով ու մեքենաներով և շատ փալաս-փուլուսով: Տան մեջ քայլելն անհնար էր, ոտքդ դիպչում էր մի որևէ իրի, հիմնականում խաղալիքի:

Մի օր Արմենենց տունն եկավ կախարդ պապիկը, նրան տեսնելիս Արմենն ուրախացավ և անմիջապես սկսեց իր փորձված լացի եղանակը: Կախարդ պապիկի մորուքը զարմանքից ցնցվեց և նա աչքերի հարցական արտահայտությամբ նայեց նախ տղայի հորը, ապա մորը, որին ի պատասխան լսեց միանման հառաչ՝ այդպես է մեր տղան՝ ի՞նչ անենք: Կախարդ պապիկն ուղիղ նայեց Արմենի աչքերի մեջ ու շշնջաց.

– Դու լավ տղա ես մինչև լաց լինելը, լավ տղա ես լաց լինելուց հետո, իսկ լացի պահին ծիծաղելի ես, ասես ծաղրածու, որի քիթը ներկած չէ, որի դեմքը սափրված չէ, որի մազերը լավ սանրված չեն, մի խոսքով՝ դու անհաջող ծաղրածու ես:

Արմենը մի պահ կախարդվեց կախարդ պապիկի խոսքից վիրավորված ու ասաց.

– Ես ծաղրածու չեմ, ես աճաբար եմ, ֆոկուսիեր եմ անում, ուրախանում ու լաց եմ լինում, ո՞վ կարող է այդպես անել, ոչ մի երեխա այդպես չի կարող, սա իմ գյուտն է:

Կախարդ պապիկը ժպտալով շոյեց տղայի գլուխն ու ասաց.

– Կարելի է ասել՝ այո՛, դա լավ ֆոկուս է, սակայն հանդիսատեսները կրկեսից կփախչեն, ո՞վ կգա լսելու լաց ու ողբ, որքան էլ նրանց նախորդի ուրախ նախերգանք,

փորձիր հակառակն անել, սկզբից մի փոքր լացիր, իսկ հետո ձիու պես խրխնջա, դա ավելի լավ ֆոկուս է, դա ուրախություն կտարածի կրկեսում և բոլորն անկեղծորեն կծափահարեն Ուրախիկ տղային, ո՛չ Լացիկ-մացիկին:

Արմենը խոցվեց այս Լացիկ-Մացիկ մականունից և մրմնջաց.

– Ես ամեն ինչ կարող եմ. և՛ ձիու պես խրխնջալ, և՛ այծի պես մկկալ, և՛ տանձի նման զվարթ նայել ծառի կատարից, և՛ ...

Կախարդ պապիկը կտրեց նրա խոսքը.

– Հավատում եմ, հավատում, ապա փորձենք:

Տղան մի պուճուր լացի պես ծղրտաց և ապա ուրախ խրխնջաց, հասած տանձի պես նայեց, այծի պես թռչկոտելով մկկաց և անգամ աքաղաղի պես ծուղրուղու կանչեց: Հայրն ու մայրը ուրախությունից փայլում էին ու ծափահարում, Տաթևիկ քույրիկը զարմանքից չգիտեր ինչ աներ և ձեռքի աղջիկ տիկնիկի մի քանի մազ պոկեց, իհարկե, դա պատահական էր, զարմանքի հետևանք, իսկ կախարդ պապիկը խնդաց ու շոյեց տղայի խարտյաշ գանգուրները, ասելով.

– Մինչև խրխնջալը ոչ մի ձի չի լալիս, ընդհանրապես կենդանիները չեն լալիս, նրանք ամաչում են լացկան կոչվելուց, նրանք շատ պատվարժան են, հատկապես աքաղաղները, որոնց դեռ ոչ մեկը չի տեսել թախծոտ, տխուր, էլ ուր մնաց լացելիս, իսկ տանձի մասին խոսելն ավելորդ է, նա պայծառ նայում է վերից ու ժպտում անցորդներին, կենդանիներին ու բույսերին, նա նման է կարմրաթուշ, դեղնամաշկ թագուհու, չէ, ի՞նչ եմ ասում, թագավորի, իսկ թագավորները, աքաղաղներն ու այծերը չեն թնկթնկում, տղան լացելիս նման է տգտգան աղջկա:

Այստեղ Տաթևիկը խրոխտ ասաց.

– Կախարդ պապիկ, ես լաց չեմ լինում, ես նկարում եմ:

– Ի՛նչ լավ է,– ասաց կախարդ պապիկն ու ձեռքը դրեց Տաթևիկի ուսին, դա նշան էր, որ ոգևորում է աղջկան,– այո՛, նկարելիս ոչ մի նկարիչ դեռևս լաց չի եղել, բայց եղել է, որ ուրախության ճիչեր են արձակել:

Հանկարծ Արմենը ուրախության ճիչեր ու ծուղրուղուներ ձայնարկեց, ու լավն այն էր, որ դրանցից առաջ նա չլացեց:

Կախարդ պապիկը գովեց տղայի առաջընթացը և հարցրեց.

– Որ մեծանաս, ի՞նչ ես դառնալու, տղաս:

– Ծաղրածու,– առանց մտածելու պատասխանեց Արմենը:

– Այ հիմա վստահ եմ, որ լավ ծաղրածու կդառնաս, նաև՝ աճապարար, քեզ սպասում են կրկեսները, մարդկանց ուրախություն պարգևելը մեծագույն ուրախություն է, արի

այսօրվանից քեզ կոչենք Ուրախիկ, ինչքան զիտեմ ոչ մի կրկեսի դերասան չունի նման մականուն:

– Լավ անուն է,– հաստատեց տղայի պապիկը, որ մինչ այդ հետևում էր կախարդ պապիկի շարժումներին և ճի՛շտն ասած, մտածում էր, թե այդ պապիկն իսկի էլ կախարդ չէ, բայց կարծես համոզվեց ու կրկնեց,– լավ, իսկական ծաղրածուի մականուն է:

Հաստատեց նաև տղայի տատը և առանձնապես ուրախ էր, որ էլ չի լսի թոռնիկի ականջ սողցող կեղծ լացը: Իսկապես ուրախ էին տղայի հայրն ու մայրը, իսկ Տաթևիկ քույրիկն ամենից ուրախն էր, վերջապես ապացուցվեց, որ Արմենը դերասան է, կեղծ լացի մասնագետ և հետո լավ է, որ եղբայրդ ուրախ է և ոչ լացկան, սա աշխարհում հայտնի ճշմարտություն է:

Տղայի հայրն ու մայրը, տատիկը, պապիկը կախարդ պապիկին հրավիրեցին հյուրասիրության, բայց նա միայն մի բաժակ սառը ջուր ուզեց և ասաց.

– Է՛, պիտի գնամ Չինաստան, ապա՝ Գվատեմալա, զիտե՞ք այդ երկրներում որքան լացկան տղաներ կան, որ կարող են դառնալ ծաղրածու:

– Շա՛տ,– երկարացնելով ասաց Արմենի պապը:

Այո, անթիվ, մի այդքան էլ Հնդկաստանում և Բրազիլիայում կան, իհարկե, բրազիլացի տղաները լաց են լինում գնդակ ուզելիս, նրանք բոլորը ցանկանում են ֆուտբոլիստ դառնալ և ոչ աճպարար, թող այդպես լինի, ֆուտբոլն էլ է ուրախացնում հանդիսատեսներին, մարզադաշտերն էլ յուրատեսակ կրկեսներ են:

Սառը ջուրը խմեց.

– Օխա՛յ,– ասաց նա,– հաջողություն, ես ուշացա, Չինաստանում սպասում են ինձ:

Ու գնաց:

Ընտանիքը տխրեց, որ կախարդ պապիկը, հանկարծակի հայտնված կախարդ պապիկը գնաց, ու նաև բերկրանքից շողաց ընտանիքը, որովհետև այլևս լացի ձայնը չի անհանգստացնի քաղաքի անդորրը, նաև շողաց ընտանիքը, քանզի Ուրախ մականունով տղա Արմենը պատուհանից դուրս նայեց հասած տանձի պես ու ծուղրուղու կանչեց հպարտ աքաղաղի նման, իսկ երբ ձիու ուժգնությամբ խրխնջաց, քաղաքը զվարթացավ, ինչպես մի կրկես, որտեղ տարիներ անց էլույթ կունենա Ուրախիկ ծաղրածուն:

ԱՆԱԿՆԿԱԼ ՆՎԵՐՈՂ

2016 թվականի մարտի 12-ին լրանում էր տատիկի, ավելի ճիշտ՝ Անուշ տատիկի 61-ամյակը: Հասկանալի է, որ կլոր տարեդարձ չէ, ասենք՝ 60, 50 կամ 25, սակայն սիրելի տատիկի ծննդյան օրը խիստ ցանկալի է ու տոնական զգացմունքներ է արթնացնում ընտանիքի անդամների հոգիներում, հատկապես անհամբերությամբ է սպասում թոռնիկ Էդվարդը, պակաս անհամբեր չէ նաև նրա քույրիկ Տաթևիկը, որն առավոտյան մկրատով կտրատում էր գունավոր թղթեր ու նրանցից ծաղիկների փունջ էր հորինում ու սուսնձում սպիտակ թղթին և ապա մի քանի բառ գրեց՝ Անուշ տատիկին՝ նվեր Տաթևիկից:

Էդվարդը նայեց նվերին ու ասաց.

– Ես էլ եմ նվեր պատրաստում, բայց չեմ ասի՝ ինչ:

– Մի ասա, բայց գիտեմ,– ասաց Տաթևիկը:

– Ի՞նչ գիտես,– հուզված հարցրեց Էդվարդը:

– Ինձնից սովորած ծաղիկների փունջ ես կտրատելու, առ մկրատը, սկսիր,– մեծավարի ասաց Տաթևիկը:

– Չգիտես,– սրտնեղած պատասխանեց տղան,– ես քեզնից չեմ սովորել, ես չեմ ուզում մկրատ,– և քիչ էր մնում արտասվի:

Նա շատ շուտ էր վիրավորվում, նրան թվում էր քույրիկն իրեն անհասկացող փոքրիկի տեղ է դնում, իսկ ինքը հինգ տարեկան տղա է և մի բան էլ ավելի՝ 5 տարեկան ու 3 ամսական, բա՛:

– Դու գիտես,– առանց որևէ հուզմունքի ասաց Տաթևիկը:

Տղան գնաց իր ձիուկի մոտ, որ Էդվարդին տեսնելիս բարձր խրխնջաց: Փոքրիկը հեծավ ձիուկին ու քշեց սարերը:

– Հե՛յ, հե՛յ, գալիս եմ:

– Ես էլ իմ հեծանվով կգամ,– բարձր ասաց Տաթևիկը և կարմիր հեծանիվը քշեց սարերը:

Իհարկե, նրանք միջանցքում քիչ էր մնում զարնվեին իրար ու, ինչպես ամեն նման առիթի դեպքում, կռվեին: Դուք երևի հասկացաք, որ աղջիկն էլ մեծ չէ, ինը տարեկան ու երկու ամսական է, իսկ այդ տարիքում փոքր եղբորը ճնշելը լավ չէ, բայց ուժը և մեծ լինելը ցույց տալու ժամանակ է:

Այդ պահին հյուրասենյակում բազմոցին ընկողմանած տատիկին մոտեցան Տաթևիկի և Էդվարդի մայրն ու հայրը և տատիկին նվիրեցին արծաթե նուրբ վզնոց: Տատիկն ուրախ վեր կացավ ու համբուրեց որդի Մուշեղին և հարս Սուսաննային: Երեխաները ծափահարեցին:

Տաթևիկն ասաց.

– Տատիկ, ես էլ քեզ իմ ստեղծած նկար-ծաղկեփունջն եմ նվիրում,– սեղանից վերցնելով՝ մոտեցավ տատիկին:

– Հրաշալի է,– հիացմունքից պայծառացած գոչեց Անուշ տատը և համբուրեց Տաթևիկի ճակատը,– հանճարեղ նկարիչ ես դու:

Էդվարդը նայում էր ու մի քիչ շփոթված էր, ինքը չէր հասցրել ոչինչ պատրաստել, նա այսպիսի պահերին նեղսրտում է ու հայացքը գցում պատուհանի կողմ: Այդպես էլ արեց:

2016 թվականին գարունը եկավ ձմռանը, օրերն այնքան վաղ տաքացան, որ մարտի 12-ին ծառերը՝ նշենին ու ծիրանենին ծաղկեցին, պատուհանին էին դիպել ծաղկած ծիրանենու պայծառ, ճերմակ ճյուղերը:

Էդվարդը լուռ մոտեցավ տան մուտքի դռանը և բացելով այն, գոռաց.

– Տատի, արի:

Անուշ տատը թռավ Էդվարդի կանչի ուղղությամբ:

Պարտեզի ծաղկած ծառերը ցույց տալով, տղան նորից գոռաց.

– Տատի, պարտեզի ծաղկած ծառերը քեզ եմ նվիրում:

Տատը հանկարծակիի եկած՝ ամուր գրկեց թոռնիկին ու կրծքին սեղմեց.

– Այսպիսի անակնկալ ընծա դեռ ոչ ոք ինձ չէր նվիրել, կեցցե մեր թոռնիկը:

– Կեցցե՛,– միաձայն արձագանքեցին տղայի հայրն ու մայրը,– էդ ո՞նց մտածեց,– հպարտացավ մայրը:

Իսկ Տաթևիկը փորձեց կատակով խեթել եղբորը, բայց զգաց, որ այդպիսի ցնծուն պահին պետք չէ խաղալ եղբոր հոգու հետ, ինքն էլ ասաց.

– Կեցցե Էդուվիկը, ի՛նչ ապերիկ ունեմ, է՛:

Տղան հպարտ նայեց մորը, հորը և ուրախ վազեց ձիուկի մոտ: Նա էլ զվարթ խրխնջաց, որը նշանակում էր.

– Կեցցե՛ ընկերս, աշխարհի ամենալավ անակնկալ նվերի տիրոջը:

Իհարկե ձիուկը սխալվում էր, նվերի տերը Անուշ տատն էր, նաև գեղեցիկ պարտեզը ջրող Մուշեղ հայրիկն էր, ծաղիկներով հիացող Սուսաննա մայրիկն էր, ծառերի տակ խաղացող քույրիկ Տաթևիկն էր և այդ պատմությունը գրի առնող պապիկն էր, որ կրում էր իր թոռնիկի անուն ազգանունը՝

ԵՐԿՆՔԻՑ ԵՐԵՔ ԽՆՁՈՐ ՉԸՆԿԱՎ ՈՒ ԸՆԿԱՎ

Լինում է չի լինում մի հեքիաթ, այդ հեքիաթը շատ տարօրինակ է լինում, ասենք՝ սկզբից սովորական է թվացել, իսկ վերջում, այ, տարօրինակը վերջում է ի հայտ եկել և...

Իհարկե, այնքան էլ լավ չէ, երբ հեքիաթի վերջը սկզբում ասվում է, էլ ինչ հեքիաթ, ով կլսի նման պատմություն, հատկապես երեխաները, որոնք այնքան խաղեր են թողնում, որ լսեն հետաքրքիր, սրտառոց հեքիաթներ:

Ուրեմն, լինում է մի պապ, անունը՝ Ասացող, լինում է մի թոռ, անունը՝ Լսող, լինում է մի ծառ, անունը՝ Մաղարթախիտ:

Պապն ու թոռը նստում էին այդ ծառի հովասուն սովերում և Ասացող պապը պատմում էր իր հերթական հեքիաթը և սովորաբար ամենավերջում ընկնում էր երեք խնձոր, մեկը՝ պատմողին, մյուսը՝ Լսողին և երրորդն էլ՝ բոլորին, հեքիաթ սիրող, հավատացող մարդկանց:

Բայց ահա եղավ մի օր, երբ հեքիաթի ավարտից հետո ոչ մի խնձոր չընկավ:

– Վա՛հ, – զարմացած ասաց Ասացող պապը:

– Ա՛հ, – ասաց Լսող թոռը:

Անցուդարձող մարդիկ ոչինչ էլ չասացին, կարծես ոչինչ էլ չէր պատահել:

– Երևի խնձորները մնացել են ծառի սաղարթի մեջ, – ասաց պապն ու կանգնեց ճյուղերի մեջ ուշադիր փնտրելու:

Թոռն էլ վեր թռավ, սևեռուն դիտեց տերևների խորքը: Ոչ մի խնձոր: Մաղարթախիտ ծառը կաղնի էր, տանձենի չէր, որ շփոթեին, ասենք, այդ տարի տանձն էլ էր սակավ, մի խոսքով՝ խնձոր չկար ու չկար:

– Ջարմանալի է, – մրմնջաց պապը:

– Այո, այսպիսի բան չէր եղել, – ասաց Լսողը, – ես պիտի ստուգեմ:

– Ո՞նց, – հարցրեց պապը:

– Կթոչեմ երկինք, կհասնեմ երկնային խնձորենուն, տեսնեմ ի՞նչ է պատահել, գուցե չորանում է, պետք է ջրել:

– Լավ միտք է, – ասաց պապը, – բայց մեր թոչող գորգը մաշվել է, այդքան էլ պիտանի չէ հեռու թոչելու:

Լսողը աչքերը կկոցեց և ժպտալով ասաց.

– Ա՛յ պապ, հո հին ժամանակները չեն, հիմա ամեն ինչ շատ է հեշտացել, մարդ ուզում է թոչում է, չի ուզում՝ չի թոչում, ամեն ինչ մարդու մտքով է կառավարվում, հիմա կարող եմ թոչել ինքնաթիռով, արբանյակով, սակայն նրանք այդքան վեր չեն բարձրանում, ես իմ գլուխն եմ արել՝ ինքնավերացում:

Պապը չհասցրեց տեսնել, թոռը թոչնի պես հասավ կաղնու կատարին, ապա սրընթաց խորացավ մոտակա ամպի ծվենի մեջ և անհետացավ:

Պապը ձեռքերը խփեց ծնկներին ու ցավագին քրթմնջաց.

– Իմ հեքիաթներն են մեղավոր, ես եմ մեղավոր, այնքան բան բստրեցի, որ թոռս հավատաց ու հավքի պես թռավ: Ի՞նչ անեմ, ո՞նց հասնեմ նրա ետևից:

Փորձեց մտքի մեջ թռչել, բայց չհաջողվեց գետնից պոկել ծերացած մարմինը, ճիշտ է, միտքը թռավ ամպերից վեր, որտեղ չկար թոռը:

– Ի՞նչ անեմ, ո՞ր գնամ, ո՞վ կօգնի,– ինքն իրեն հարցնում էր պապը:

Անցորդները եղածին տեղեկանալով, մտածեցին ցնդել է ծերուկը: Ոչինչ էլ չասացին, միայն «ախ ու վախ» արին ու հեռացան:

Նրանցից մի քանիսը չզլացան ասել.

– Այնքան հեքիաթ պատմեց ու հավատաց, որ ծովեց,– ու հետո իբր ցավակից հառաչեցին.– խեղճ բիձա...

Ասացող պապը տուն չգնաց, առանց թոռան ո՞ր գնար, նա մտքում հավատաց, որ թոռը շուտով կգա և իրար հետ կգնան տուն:

Կաղնու վրա իջավ մի կաչաղակ, պապը հարցրեց.

– Չե՞ս տեսել իմ թոռ Լսողին:

– Չակ-չակ,– պատասխանեց Կաչաղակը:

Պապը հասկացավ թռչնի դրական պատասխանը, կաչաղակներն այդպես են արձագանքում, հակառակ դեպքում ոչ մի ձայն չեն հանում:

Այդ ժամանակ Լսողն արդեն երկնքի այն հատվածում էր, որտեղ կախարդական ծառերն են աճում և նրանց մեջ՝ խնձորենիներ: Այգեպանն էլ, Ասացող պապի պես, բարի աչքերով ծերուկ էր, որը, պարզվեց, հասկանում է բոլոր լեզուները, քանի որ եթե մրգի լեզուն ըմբռնում ես, մարդու լեզուն կամ ամպերի, կամ ծիածանի լեզուները չհասկանալ չես կարող, այսինքն՝ բնության մեջ ամեն արարածի լեզու դյուրին տրվում է նրան, ով մրգի պես անուշ խոսք ու լեզու ունի:

Եվ Լսողը ծերուկին բարևեց.

– Ողջույն երկնային այգեպանին:

Ծերուկը շոյեց տղայի գլուխն ու պատասխանեց.

– Բարի գալուստ, երկրային հյուր արքայազնին:

– Ես արքայազն չեմ,– շտապ ասաց Լսողը:

– Ամեն հեքիաթ լսող ու ըմբռնող ինքնին թագավոր է և արքայազն,– ասաց ծերուկը և երկար, ճերմակ մորուքը սղալելով, տղայի ձեռքից բռնած տարավ խնձորենիների կողմը:

Լսողը հարցրեց.

– Ինչո՞ւ պապիս պատմած հեքիաթից հետո խնձորներ չընկան, խնդրում եմ, եթե տեղյակ եք, ճիշտը ասեք:

– Մեր այգում մշտապես ճիշտ են խոսում, կեղծ խոսելուց փարթամանում են մոլախոտերը, ուրեմն լսիր, ձեր երկրում վերջերս շատացել են մեքենաները, սարքավորումները, ռոբոտները ու տարատեսակ սմարթֆոն, տելեֆոն և այֆոններն ու այլֆոնները, մարդիկ ժամանակ չունեն...

Ծերուկի խոսքը կիսատ մնաց:

Այդ պահին պարզ երկնքում դղրդաց ու ճայթեց, փայլատակեց ու շանթեց կայծակը: Այդպիսին Լսողը դեռ չէր տեսել: Երկնքում ահեղ տարուբերվեցին կրակվորած, հանկարծակի հայտնված ամպերը:

Ծերուկը իլացել ու ահաբեկված նայում էր մերթ կայծակին, մերթ տղային.

– Չվախենաս,– գոչեց նա,– ես եղան ունեմ:

Նա վազեց դեզի մոտ ու խոտերի միջից արագ դուրս քաշեց եղանն ու հարձակվեց կայծակի վրա:

Կայծակը կարծես չարախնդում էր ու առավել ուժգին շամփրում:

Լսողը բարձր գոչեց.

– Ես նրան կհաղթեմ:

– Ինչո՞վ,– հագիվ լսելի հարցրեց ծերուկը:

– Հեքիաթ պատմելով,– գլուտ արածի պես պատասխանեց տղան:

– Դե, քեզ տեսնենք,– եղանով պայքարը շրադարեցրած՝ գոտեպնդեց ծերուկը:

Եվ տղան սկսեց.

– Հե՛յ, Կայծակ, լինում է, չի լինում մի բալետի պարուհի, անունը՝ Էա, նա այնքան...

Տղայի խոսքը կտրեց Կայծակը.

– Դու միամիտ այծիկ ես, չգետե՞ս, մենք բալետ-մալետ չգիտենք, մերը հզոր կրակե պարն է ու կատաղի շանթահարումը:

Եվ այնպես բոցկլտաց, որ տղային թվաց, թե նրա կայծերից ու կրակե լեզվից այրվում է Էայի նրբագեղ զգեստը:

Լսող տղան գոռաց.

– Է՛յ, Կայծակ, հիմա քեզ կթրատեն սուսերով տղերքը, լսի՛ր:

Եվ անմիջապես հնչեց Արամ Խաչատրյանի «Սուսերով պար» երաժշտությունն, ու երկնային ասպարեզ մտան մերկանդամ, հզոր մկանունքով, սուսերակիր պարող տղաներ:

Անպատմելի գոյամարտ էր Կայծակի և պարողների միջև, Էան էլ իր կրակոտ պարն էր բորբոքել:

Կայծակը վիրավոր գագանի պես վեր էր սլանում, իջնում, զարկում էր քաջ պարողներին, իսկ սուսերակիր տղերքն անխնա թրատում էին Կայծակ վիշապին, բայց

միննույն ժամանակ շարունակում էին գեղեցիկ պարել: Այնքան հետաքրքիր է, երբ պայքարը գեղեցիկ է լինում, դա պարտվողին անգամ հաճույք է պատճառում: Եվ այդպես խոցված վիշապի պես ընկած Կայծակը ճայթեց մարդկային լեզվով.

– Շնորհակալ եմ, դուք լավ պարեցիք, իսկ էա գեղեցկուհին իր հմայքով ինձ խոցեց մինչև հոգուս խորքը:

Ողբերգությունը չհասցրեց իրականանալ, բարի ավարտ ունեցավ:

Երկնային ծերուկը դիմեց տղային.

– Միրելի տղա, անունդ ասա:

– Լսող է իմ անունը, իսկ Ձե՞րը:

– Իմն էլ Համայն է, Լսող տղա, դու հրաշք հեքիաթով հաղթեցիր հրեշ Կայծակին, դա ոչ միայն գեղեցիկ էր, վեհ, այլև զավեշտալի ու զվարթուն, ո՞վ է քեզ ուսուցանել չարի դեմ պարով պայքարելու գաղափարը:

– Իմ պապը, Համայն պապիկ, նա իր հեքիաթները հաճախ պարելով է պատմում, մեր հայկական հին պարերը հիմնականում մարտապարեր են,– հպարտացավ Լսողը:

– Դու հիշո՞ւմ ես, որ իմ խոսքը կտրեց Կայծակը, կարո՞ղ ես ասել, թե ո՞րն էր իմ վերջին միտքը,– հարցրեց Համայնը:

– Այո, մինչև Կայծակի հայտնվելը Ձեր վերջին բառերն էին՝ մարդիկ ժամանակ չունեն:

– Ճիշտ է, տղաս... Մարդիկ ժամանակ չունեն հեքիաթ լսելու և, նամանավանդ, հավատալու հեքիաթային բաների, նրանք շատ են խրվել գործի-մործի, հոգսի-մոգսի, առ ու ծախի ճահիճը, ծաղրում են մեր ու ձեր նմաններին: Գնանք խնձորենիների մոտ:

Լսողը տեսավ ոսկեփայլ խնձորների հրավառություն, նրանք փայլփլում էին ու կանչում դիտողին:

– Լսող տղա, դու հասկացա՞ր, թե ինչու պապիդ պատմած հեքիաթից հետո խնձոր չընկավ, խնձորներն էլ են խռովել մարդկանցից, մարդիկ իրար գլխի ռումբեր են զցում:

Այս խոսքերից հետո տխրեց Համայնը: Ապա ժպտաց ու ասաց.

– Լսող տղա, ես չեմ ճանաչում քո հեքիաթի էային, բայց հասկացա, որ նա քեզ շատ է ոգևորել:

– Միսալ կլինի հակառակը ասել, իմ մտքում էան պարում է և կարծես թռչկոտում է ամպերի վրա,– ամաչելով ասաց տղան:

– Տա Աստված, էան քեզ այցելի երկրի վրա,– աչքով արեց Համայնը:

Լսողը հավատաց, որ նրա խոսքը իրականությանը մոտ է:

Ապա Համայնը Լսողին մեկ-մեկ ծանոթացրեց խնձորենիների հետ, նրանք շատ առողջ էին, տերևներին ցող էր, ճյուղերը՝ դալար:

– Մի հատ չե՞ս ուտի,– հարցրեց Համայնը:

– Չէ, ես միշտ պապիս հետ եմ ըմբռնում, մենակ չեմ կարող: Համ էլ պապս սպասում է, երևի գնամ, կանհանգստանա:

– Միրելի Լսող տղա, ես քեզ լիովին ընկալեցի, ինչպես հանկարծակի եկար, այդպես էլ իրավունք ունես հեռանալու, հեքիաթային է կյանքը և երբեմն անհասկանալի ու հանկարծական, սակայն մշտապես հավատը հաղթում է:

Լսողը լսեց և խելոք տղայի պես գլխի շարժումով հաստատում էր Համայն ծերուկին և ասաց.

– Պապս էլ է նման խոսքեր ասում:

– Դա համատիեզերական պարզ խոսքեր են, խնձորն էլ է այդպես մտածում, ամպն էլ, որ ուզում ես իմանալ՝ կայծակն էլ, տեսա՞ր ինչ հանկարծակի հայտնվեց, բայց չար էր նրա միտումը. պարտվեց՝ պարից ու հավատից, Լսող տղայի հավատից: Դու հիմա թո՛իր, մի՛ ուշացիր, պապդ անհանգիստ է: Հաջողություն:

– Հաջողություն, Համայն պապիկ, ես նոր հասկացա, թե ինչ լավ է, որ կան պապիկներ ու թոռներ, պարուհիներ ու կայծակներ, քաջեր ու եղաններ և ինքնաթիռներ ու ինքնավերացումներ,– ասաց տղան:

– Հա, վերջինը քո գյուտն է, տեղեկացա կաշաղակից,– խորամանկ ժպտաց,– միշտ հորինող լինես, ապրես, տղաս, ես էլ ինքնաիջեցում եմ հորինելու, մի օր գամ քեզ ու պապիդ հյուր:

Նա համբուրեց տղայի ճակատը: Լսողը բռնեց նրա եթերային ու եռանդ հաղորդող ձեռքը և ինքնավերացվեց, չէ, ինքնավարացվեց, այսինքն՝ ասես վերելակով իջավ երկիր:

Կաղնու տակ կանգնել էր պապը ու նրա սրտի ուժգին բաբախյունից ոչ մի թռչուն չէր թառում ճյուղերին:

Թոռանը տեսնելով, ճչաց.

– Ա՛յ տղա, ես ո՞ւր էիր, հոգիս հանեցիր:

– Գնացի, տեսա խնձորենիները և Համայն պապիկից իմացա, թե ինչու քո հեքիաթներից հետո այլևս խնձոր չի ընկնում:

– Ինչո՞ւ,– սրտատրոփ հարցրեց պապը:

– Հիմա կպատմեմ,– ասաց տղան ու սկսեց պատմել գլխով անցածը:

Երբ նա վերջացրեց, պապը, ամեն ինչ հասկացողի պես հառաչելով, բեղերը սղալեց ու հենց այդ պահին երկնքից երեք խնձոր ընկավ, մեկը՝ պատմողին, այսինքն՝ թոռանը, մյուսը՝ Լսողին, այսինքն՝ պապին, իսկ երրորդը՝ բոլորին, ովքեր հավատում են հեքիաթներին:

Այս հեքիաթից հետո էլ ո՞վ կխիզախի չհավատալ, Կայծակը վերից հանկարծ կհայտնվի:

Հա, մոռացա ասեմ, որ Լսող տղան և Էա պարուհին հետո ամուսնացան, այ, սա հեքիաթ չէ, իրականություն է, կամ իրական հեքիաթ:

ԻՆՉՊԵՍ ՍՈՎՈՐԵՑԻ ՇԱԽՄԱՏ ԽԱՂԱԼ

Փոքր ժամանակ ես շատ էի սիրում խաղալ՝ պահմտոցի, բռնոցի, յոթ քար, բանկափլավ, բայց ամենից շատ՝ ֆուտբոլ: Տղերքով վազում էինք գնդակի ետևից, մեկ-մեկ էլ գնդակն էր թռչում մեր գլխի վրայով ու մեր սրտի միջով: Գոչում էինք՝ գո՛ւ, գո՛ւ, գո՛ւ... ու թվում էր ֆուտբոլից զատ ուրիշ ոչ մի խաղ ինձ չի դյուրի:

Մակայն մի օր մեր տան բակում ավագ եղբայրս և նրա ընկերը նստած լուռ նայում էին սև ու սպիտակ քառակուսիներով տախտակին ու նրա վրա շարժում տարօրինակ խաղաքարեր: Եղբորս հարցրի.

– Ի՞նչ խաղ է սա:

Նա կամաց ասաց.

– Մի խանգարի, շախմատ է,– ու բռնելով ձիու նման սպիտակ խաղաքարը, մյուս խաղաքարերի վրայով թոցնելով, դրեց խառնափնթոր շարված խաղաքարերի մոտ:

Ինձ գրավեց ձիու թռիչքը, ուշադիր հետևեցի, թե ինչպես է շարունակվելու խաղը: Սև և սպիտակ խաղաքարերը քշվում էին առաջ, ճակատ-ճակատի զարնում, ձիերը թռչում էին առաջ ու ետ: Եղբայրս հայտարարեց.

– Շախ:

Նրա ընկերը զարմացած նայեց ու կմկմաց.

– Մա շախ է ու մատ, ո՞նց չնկատեցի, դու հաղթեցիր, հաշիվը հավասարվեց:

Նրանք տախտակից դուրս ցրված խաղաքարերն էլ վերադարձրին տախտակի վրա, շարեցին ու սկսեցին նորից խաղալ:

Ես մտածեցի հետևելով սովորել խաղը:

Ամենաճիշտ ուղին թռչող ձիու մեջքին աներևույթ նստելն էր ու վերևից սովորելը, թե ինչ են անում այն փոքրիկ, առաջամարտիկ խաղաքարերը: Թռչող ձին ինձ հուշեց.

– Այդ փոքրիկ խաղաքարերը զինվորներ են կոչվում, նրանք քայլում են մերթ մի քայլով, մերթ երկու, եթե, իհարկե, նոր են սկսելու խաղը, իսկ հետո միայն մի քայլ են անում և թրերով հարվածում են շեղակի, ճիշտ է, թրերը չեն երևում, բայց զինվորները շեղակի հարվածելով, խաղադաշտից դուրս են վանում պարտված զինվորին կամ մյուս խաղաքարերին, իսկ գիտե՞ս, թե ինչ են կոչում այն բարձր, սպիտակ խաղաքարերին:

– Ո՛չ,– ասացի ես:

– Թագավոր են կոչում, սև և սպիտակ թագավորները կամ արքաները, ինչպես ուզում ես ասա, նրանք չեն նեղանա, քայլում են ծանր, ինչպես վայել է երկրի տիրակալին, նրանք ձեռնամարտից հեռու են, նրանց պիտի պաշտպանեն մյուս խաղաքարերը՝ փղերը, նավակները, դե մեզ արդեն գիտես՝ ձիերը, զինվորներն առաջին հերթին, իսկ

ամենակարևոր պաշտպանը թագուհին է, ահա, թագուհին, սև գույնի, սրընթաց կտրում է իր դիմացի բաց վանդակներն ու հասնում սպիտակների թիկունք: Թագուհիները կարող են քայլել և՛ ուղիղ, և՛ շեղակի, եթե, իհարկե, նրանց չի սպառնում վտանգ, նրանք պետք է ուշադիր լինեն, թե չէ մեկ էլ տեսար մի ծանրամարմին փիղ իր ոտքի տակ գցի թագուհու քղանցքը: Հա, այն զինվորների նմաններին գիտե՞ս ինչ են կոչում:

– Դեռ ոչ,– պատասխանեցի:

– Դրանք հենց իմ ասած փղերն են, սև և սպիտակ խաղաքարերի փղերը քայլում են շեղակի, կարող են և մեկ, և՛ յոթ քայլ անել, եթե, անշուշտ, նրանց ճանապարհը բաց լինի: Դու իմացիր, որ սև և սպիտակ խաղաքարերն ունեն սև և սպիտակ փղեր, տարօրինակ է, չէ՞, նրանք իրար դեմ են պայքարում, սևերը՝ սև փղերի, սպիտակները՝ սպիտակների, բայց ոչ միայն փղերի դեմ են պայքարում, նաև՝ մյուս հակառակորդ խաղաքարերի:

– Իսկ այն անկյունների խաղաքարերին ի՞նչ են կոչում:

– Լավ նկատեցիր, նրանց կոչում են նավակներ: Այդ նավակները դեռևս ջրի երես չեն տեսել և մի քիչ տխուր են, նրանք քայլում են միայն առաջ կամ էլ կողք, կարող են քայլել մեկ վանդակ առաջ կամ կողք և քայլել մինչև յոթ քայլ առաջ կամ կողք, եթե նրանց չսպառնա վտանգ: Նրանք ցամաքում այնքան էլ վստահ չեն, այ եթե ջուր լիներ, նրանք կսահեին հեռո՛ւ-հեռու, կճամփորդեին աշխարհով մեկ և մենք էլ՝ նրանց հետ:

Ես վերևից տեսա, որ շախմատի տախտակի վրա արյան հետքեր կան և հարցրի.

– Սիրելի ձիուկ, դա ի՞նչ արյուն է:

Ձին ժպտալով պատասխանեց.

– Դա արյուն չէ, դա քեզ թվում է, ինչպես կինոներում, մարդկանց սրտից իբր արյուն է հոսում, բայց դա տոմատ է կամ կարմիր ներկ, այդպես տպավորություն են ստեղծում, իսկ քո տեսածն իսկապես ճակատամարտ է, պայքար, զոհեր, սակայն՝ ոչ մի արյուն, քո երևակայության մեջ է արյունը, սա խաղ է, և հաճախ պարտվողը ընդունում է իր սխալը և ժպտում, իսկ հաղթողն էլ մեծահոգաբար ախոյանի ձեռքն է սեղմում ու ցույց տալիս, թե որտեղ է սխալվել և ինչպես կարող էր ճիշտ խաղալ: Շախմատիստներից շատերն իրար ընկերներ են, նրանք խաղալու պահին են ախոյան:

– Ֆուտբոլում իրար ոտք են ջարդում, ոտք գցում,– ասացի ես:

Ձին ասաց.

– Շախմատը մտքի խաղ է, ամեն ինչ նախ մտքում է կատարվում, ապա՝ խաղատախտակին, ամեն խաղացող նախ ինքն է իրեն մեղադրում վատ քայլի համար:

– Դու մեղավոր չե՞ս սխալ քայլի համար,– հարցրի ես:

– Ո՛չ, ես խաղացողի նախագծի իրագործման դերակատարն եմ, ես ու խաղացողը միաձուլվում ենք՝ իմ սխալը նրանն է, նրանը՝ իմը: Լինում է, որ խաղացողն իրենից

դժգոհում է և ձգտում է կատարելագործման, առանց դրա նա և ես չենք հասնի մեծ նվաճումների՝ չեմպիոնության:

– Իսկ դու երբևէ չեմպիոն եղե՞լ ես,– հարցրի:

– Ես դարձել եմ ձեր թաղի չեմպիոն և միայն այդքանը, բայց երազում եմ հասնել մեծ քարձույթների: Մի գորավար ասել է «Վաստ է այն զինվորը, որ չի երազում գեներալ դառնալ», այդպես կարելի է ասել. «Վաստ է այն ձին, որ չի երազում Պեգաս դառնալ», Պեգասը, գիտես, չէ՞, թռչող, թևավոր, առասպելական ձի է:

Խաղատախտակից հեռացվում էին խաղաքարերը, հերթը հասավ իմ ձիուն, նա խիզախորեն եղբորս ձեռքի մեջ տեղավորված՝ թռավ ու գոհվեց: Եղբայրս ասաց.

– Տեսա՞ր, ինչ գեղեցիկ զոհաբերություն է:

– Չէ, չտեսա, սխալ քայլ է, և ես համարձակորեն ձիուն կուտեմ,– ասաց եղբորս ընկերը և փղով հարվածեց ձիուն:

Ձին ու ես, որ աներևույթ նստել էի ձիու վրա, հայտնվեցինք խաղատախտակից դուրս, գետնին: Ես շատ տխրեցի ձիու և ինձ համար, բայց ձին կանգնեց ու խրոխտ ասաց.

– Եղբայրդ կհաղթի, ճիշտ էր ինձ գոհելը, ես շատ ուրախ եմ:

Ճիշտ որ, քիչ անց եղբայրս հաղթեց և հպարտ մրմնջաց.

– Տեսա՞ր, որ ձիու զոհաբերությունը ճիշտ էր:

– Երևի,– համաձայնեց եղբորս ընկերը,– պարտությունից դժգոհ չեմ, դու լավ խաղացիր: 2:1, ոչինչ, էլի խաղանք:

Նրանք շարունակեցին խաղալ, և ես այդ երեկո սովորեցի զինվորների, ձիերի, փղերի, թագուհիների, նավակների ու թագավորների քայլերը, բայց դա շատ քիչ է, ես պիտի մտածել կարողանամ, մտքիս մեջ քայլեր անելու և քայլեր հաշվելու, դիրքերը գնահատելու մեջ խորանամ, որովհետև շախմատը օվկիանի պես խորն է և անձայր: Լավ լողալ, լավ թռչել, լավ և բարի մարդ դառնալ, նա կարող է հպարտանալ հաղթելով, կարող է պարտվելիս չվհաստվել, ձգտել նոր պայքարի ու հաղթանակի և կարող է ոչ-ոքի առաջարկել բոլորին և ուրախանալ, որ բոլորն էլ խաղում են շախմատ ու թռչում ձիու հետ, ձիուն ձուլված:

ԿԱԽԱՐԴԱԿԱՆ ՄԱՏԻՏԸ

Լինում է և կա մի տղա, անունը՝ Էդվարդ, նա 5 տարեկան և ունի մի մատիտ, որի քիթն այնքան է քսվել թղթին, պատերին, որ մաշվել ու համարյա անպիտան է: Էդվարդի հայրը տուն է կառուցում, պատերն արդեն ութ շարք բարձրացել են, և երեխաները խաղում են պատից քիչ հեռու:

Էդվարդի քույր Տաթևիկն ինը տարեկան է և մի օր գաղտնիք ասելու պես շնջաց պապիկի ականջին.

– Պապի՛, թող մատիտով ուզում է քանդել տան պատերը:

– Ո՞նց,– զարմացած հարցրեց պապը:

– Նա մատիտը դնում է պատի տակ ու քրթմնջում կախարդական բառեր,– կամացուկ ասաց Տաթևիկը:

– Ա՛յ քեզ բան,– գլուխը քորեց պապն ու իր մոտ կանչեց Էդվարդին:

Երբ նա մաշված քթով մատիտով մոտեցավ, պապը հարցրեց.

– Էդուվի՛կ ջան, ինչո՞ւ ես ուզում տունը քանդել, որը ձեր տունն է, հայրիկդ ձեզ համար է կառուցում:

– Ի՞նչ անեմ– շատ սառը պատասխանեց Էդվարդը:

– Բայց այդ մատիտը կարո՞ղ է քանդել, չէ՞ որ հալից ընկել է:

– Հա՛, կարա՛,– համոզված պատասխանեց Էդվարդը,– ես կախարդական բառեր եմ ասում, ինքն էլ է կախարդական:

Տաթևիկը խնդաց.

– Չէ մի չէ՛ կախարդական, մի գիծ էլ չի կարա քաշի:

– Նայի՛,– վիրավորվեց Էդվարդը և մատիտն ամուր հպեց պատին,– նայի՛:

Բաց գույնի պատին պարզորոշ կարմիր գիծ երևաց:

– Տեսա՞ք,– հպարտ հարցրեց Էդվարդը:

– Հա՛ էլի,– հաստատեց Տաթևիկը:

– Ճիշտ է,– ասաց պապը,– բայց ո՞նց կքանդես այս ամուր պատը:

– Չգիտեմ, մատիտը կարա, կախարդական է, համ էլ ես կախարդական բառեր գիտեմ,– համոզիչ պատասխանեց Էդվարդը:

– Տաթևիկ, արի՛ չվիճենք Էդուվիկի հետ, ես հավատում եմ, որ եթե ցանկանա, ամեն ինչ կարող է, անգամ անպիտան մատիտով,– ժպտալով խոսեց պապը:

– Անպիտան չի՛, պապի՛, ուզո՞ւմ ես էլի գիծ քաշեմ,– վստահ ասաց Էդվարդը ու պատին մի նոր գիծ քաշեց, որից հետո լրիվ մաշվեց մատիտը:

– Լա՛վ, լա՛վ, հավատում ենք: Այսօր լավ օր է, իրիկունը պահմտոցի խաղանք:

- Ճիշտ որ,- ճշաց Տաթևիկը:
- Դու առաջինը կփակես,- հրամայեց Էդվարդը:
- Չէ, դու,- նեղացավ Տաթևիկը:

Վեճին վերջ տվեց պապը, նրանց խոստանալով հենց հիմա գնալ խանութ և գնել գունավոր մատիտներ Էդվարդին, իսկ ջրաներկ՝ Տաթևիկին:

Տունը կառուցվել էր, Տաթևիկը 13 տարեկան էր, Էդուվիկը՝ ինը, և մի երեկո պապը հարցրեց.

- Էդուվիկ, հիշո՞ւմ ես, քո մատիտով ուզում էիր քանդել ձեր տունը:
- Հա՛,- շեշտակի պատասխանեց Էդվարդը և գնաց իր սենյակ:

Քիչ հետո մաշված, փոքրիկ մատիտը ձեռքին վերադարձավ:

- Պապի՛, տես, էն մատիտն է, բայց էլ կախարդական չի:

Տաթևիկը կողքից հեզնեց.

- Իբր էն ժամանակ կախարդակա՞ն էր:

- Հա՛, բա ի՞նչ էր, ես էի սովորեցրել կախարդական բառեր, նա էլ կատարում էր ինչ ուզեի:

- Իսկ ո՞ւր են բառերդ,- հարցրեց պապը:

- Բառերը մտքիս մեջ են, նրանք այնտեղ են քանդում ու շինում, թռչում ու սուզվում ծովերի մեջ:

- Պա՛հ-պա՛հ,- միջամտեց Տաթևիկը,- երևի կախարդական գորգ են:

- Բա ի՞նչ են,- վիճելու պատրաստ՝ վրա տվեց Էդվարդը,- պատմվածք եմ գրել, կկարդա՛ս, կիմանա՛ս:

- Բե՛ր կարդանք,- անհամբեր ասաց պապը:

Էդվարդը մի պահ լռեց ու պատասխանեց.

- Մտքիս մեջ եմ գրել, էս մատիտով, համ էլ տուն եմ նկարել,- ու խնդաց Էդվարդը:

Պապն էլ խնդաց, Տաթևիկն էլ խնդաց:

Այս պատմվածքի վերջում բոլորն ուրախացան, որովհետև կախարդանքը ոչ միայն պիտի երևա, այլև չերևա, բայց ծավալվի, վեր ու վար թռչի մտքի մեջ, մաշված քթով մատիտի պատկերած կախարդական գորգի հրաշք սավառնումով:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՎԱ ԱՂՋՆԱԿԻ ՀՈՐԻՆԱԾ ԼԵԶՈՒՆ

ԽՈԶԻ ԿՆԻՔԸ

ՋՈՒՐԸ

ՍԵՎՈՒԿԸ

ՈԶՆԻՆ ԵՎ ԵՂԵՎՆԻՆ

ԳԱՆՁԱՏՈՒՓԸ

ԱՄԵՆԱՄԵԾ, ԱՄԵՆԱԼԱՎ ԵՎԵՐԸ

ԼԱՑԻԿՆ ՈՒ ՈՒՐԱԽԻԿԸ

ԱՆԱԿՆԿԱԼ ԵՎԵՐԸ

ԵՐԿՆՔԻՑ ԵՐԵՔ ԽՆՁՈՐ ՉԸՆԿԱՎ ՈՒ ԸՆԿԱՎ

ԻՆՉՊԵՍ ՍՈՎՈՐԵՑԻ ՇԱԽՄԱՏ ԽԱՂԱԼ

ԿԱԽԱՐԴԱԿԱՆ ՄԱՏԻՏԸ